



## ՀԱՎԵԼՎԱԾ 1.2

**ԵԹԿՊԻ**

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ**

**ԾՐԱԳԻՐ**



Հաստատում էմ՝

Ռեկտոր Ա.Մազմանյան.....

31 հունվարի 2013թ.

**ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ**

**ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**2013 - 2017 թթ.**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարը համաշխարհայնացման, սոցիալական և այլ մարտահրավերների, նշանակալի փոփոխությունների ժամանակաշրջան է, որի համատեքստում արվեստների մասնագիտությամբ կրթությունը առանձնակի տեղ է զբաղեցնում: 21-րդ դարի բարձրագույն կրթությունը տարբերվում է մի շարք առանձնահատկություններով և ուսուցման կազմակերպման ու բովանդակության արմատական փոփոխություններով: Ուստի ԵԹԿՊԻ-ն ևս գտնվում է մեծ մարտահրավերների և փոփոխությունների ժամանակաշրջանում, որոնք պայմանավորված են ժողովրդագրական, սոցիալական, և մշակութային բազմազան գործոններով: Ստեղծագործական բուհը չի կարող դիմագրավել համաշխարհայնացման մարտահրավերներին՝ առանց վերագնահատելու և վերանայելու իր դերը և պատասխանատվությունը մշակութային ասպարեզում, առանց բարեփոխելու իր ինստիտուցիոնալ կարողությունը:

ԵԹԿՊԻ-ի փորձը՝ որպես ՀՀ-ում բարձր որակավորմամբ խաղարկային արվեստների մասնագետների պատրաստման առաջատար բուհի, թույլ է տալիս բարձրացնել առաջանցիկ խնդիրներ և ներկայացնել դրանց լուծումները հասանելի ձևով:

Սույն ռազմավարական ծրագրի մեջ փորձ է արվում առաջադրել գործընթացների համակարգ, տրվում է ինստիտուտի զարգացման ու գործունեության բաղկացուցիչ մասերի գլխավոր մտադրությունը, որը կարող է տանել ճիշտ ու անհրաժեշտ զարգացման՝ յուրաքանչյուր իրավիճակի դեպքում: Ռազմավարական ծրագիրը ներառում է երկարաժամկետ հեռանկարային սկզբունքներ ու նպատակային դրույթներ, ինչպես նաև արտացոլում է մինչև 2017թ. ներառյալ կարճաժամկետ, միջնաժամկետ և վերջնաժամկետ խնդիրներ ու նպատակներ:

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը ազգային և համազգային նշանակության և դերակատարության կրթական և մշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը խաղարկային արվեստների բնագավառում գիտելիքի և փորձի միջոցով համամարդկային ձեռքբերումների տարածումն է՝ ՀՀ կրթության ազգային շրջանակներում:

Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ ԵԹԿՊԻ-ն միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է խաղարկային արվեստների մասնագիտությունների ոլորտում համապատասխան գործունեության՝ ուղղված հանրության մշակութային կյանքի բարեկեցության բարձրացմանը՝ աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համահունչ:

ԵԹԿՊԻ - Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԵԹԿՊԻ-ի ռազմավարական կարևորագույն նպատակն է խաղարկային արվեստների մասնագիտությունների շրջանակներում բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստումը, որը համապատասխանում է արվեստի և աշխատաշուկայի ժամանակակից ու ապագա նախապայմաններին, նրանց վերապատրաստումն ու որակի բարձրացումը հասարակության կողմից պահանջարկված վերը նշված ոլորտում, սովորողների դաստիարակությունը՝ հայրենական ու համաշխարհային մշակութային բարձրագույն կրթության չափանիշներին համապատասխան, ինստիտուտի ներկա հիմքի վրա մշակութային նորարարական և հետազոտական բուհի ձևավորումը, որն առաջին հերթին ենթադրում է գիտության, ուսուցման, պրակտիկայի միասնություն:

Ազգային մշակույթն ու արվեստը մշտապես պահպանել և մարմնավորել են ժողովրդի հոգևոր ու բարոյական ներուժը, առանց որի անհնար է պատկերացնել ինչպես էթնոսի, այնպես էլ առանձին անհատի գոյությունն ու հոգևոր զարգացումը:

Յուրաքանչյուր ժողովուրդ, որը զուրկ է ավանդույթներից, ժողովրդական բանահյուսությունից, ազգային մշակույթից և արվեստից, դատապարտված է անհետացման: Ժողովրդի բազմադարյան հիմնարար արժեքները հզոր ներգործություն են ունենում անհատի, հատկապես երիտասարդության ներաշխարհի վրա, հաստատուն են դարձնում նրա հոգևոր ներուժը, նպաստում են նրա անհատականության ձևավորմանը:

Ռազմավարական նպատակին հասնելու համար ԵԹԿՊԻ-ն հենվում է հետևյալ սկզբունքների վրա .

- կրթության որակի, չափորոշիչների ու մակարդակի բարձրացում ու պահպանում, կրթության բովանդակության անընդհատ թարմացում, որը կհամապատասխանի խաղարկային արվեստներին ներկայացվող ժամանակակից պահանջներին,
- հետազոտությունների, այդ թվում նաև գիտական, կրթական գործընթացի առաջընթաց զարգացում ու ինտեգրացիա,
- նորամուծություններ,
- ժամանակակից կրթության լայնածավալ հասանելիության ապահովման կողմնորոշում,
- ուսանողների շրջանում մեծ մարդասիրական մշակույթի, բարձր բարոյական ու հայրենասիրական գաղափարների ձևավորում, ակադեմիական ու բուհական ազատությունների զարգացում:

Ինստիտուտը կերտում է իր ապագան՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական նորամուծությունների բարձր առաջընթացը, Հայաստանի մուտքը համաշխարհային կրթական, մշակութային ու տնտեսական տարածություն, նոր տեխնոլոգիաների մուտքը կրթության և հասարակական կյանքի այլ ոլորտներ, Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորումը:

Այդպիսի մոտեցման սոցիալական նշանակությունը որոշվում է ծառայությունների ոլորտի դերով, որտեղ արագընթաց զարգացումները ստեղծում են մարդու և հասարակության զարգացման սկզբունքորեն նոր միջավայր:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

### I. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

#### Խնդիր 1.

Միջազգային ծրագրային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջմունքներին համահունչ կրթական ծրագրերի կառուցվածք ու բովանդակություն, արդի պահանջներին համապատասխան նոր մասնագիտություններ:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

1. 1. Ուսումնասիրել և ճշգրտել բակալավրական և մագիստրոսական մասնագիտությունների կրթական ծրագրերը՝ ելնելով եվրոպական ծրագրային չափանիշներից և ազգային մշակույթի առանձնահատկություններից:

1. 2. ԵԹԿՊԻ-ի շրջանավարտներից և կրթական ծրագրերի հիմնական գործատու կազմակերպություններից և մասնագիտական ընկերակցություններից ճշտել դրանց համապատասխանությունը գործնական աշխատանքի պահանջների հետ, արդյունքում մշակել երաշխիքներ:

1. 3. Գնահատել բոլոր կրթական ծրագրերը համապատասխան մեթոդներով և չափանիշներով:

1. 4. Մշակել բոլոր կրթական ծրագրերի համար չափելի գիտելիքները, կարողությունները և հմտությունները, տալ որակավորման աստիճանների և մասնագիտությունների ելքային կրթական արդյունքները:

## Խնդիր 2.

Եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան որակի ներքին ապահովման համակարգ:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

### 2.1. Մշակել ԵԹԿՊԻ-ի

- որակի ներքին ապահովման համակարգի հայեցակարգ,
- որակի շարունակական բարելավման ռազմավարություն,
- ուսումնական, կազմակերպական համապատասխան ընթացակարգեր,
- սահմանել կառավարման կառույցների ու կառուցվածքային միավորների պարտականություններն ու գործառույթները:

2.2. Մշակել ԵԹԿՊԻ-ի գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշները՝ համաձայն ՄԿՈԱԱԿ-ի որդեգրած հավատարմագրման ստանդարտների:

2.3. Իրականացնել ԵԹԿՊԻ-ի կրթական գործունեության ինքնագնահատման գործընթաց.

- հրապարակել զեկույց՝ որակի արտաքին հավատարմագրման գործընթացի իրականացման համար,
- կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման համար:

2.4. Նախապատրաստվել որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին:

2.5. Ստեղծել ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան ներքին չափանիշներ և ընթացակարգեր.

- կադրային-ռեսուրսային ապահովվածության գնահատման,
- ուսումնական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման համար:

2. 6. Ստեղծել և հրապարակել.

- ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման կանոնակարգ,

- ուսանողների ուսումնառության արդյունքների վերանայման և բողոքարկման ընթացակարգի մեխանիզմներ,
  - դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման մեխանիզմներ և չափանիշներ:
2. 7. Ստեղծել և հրատարակել կրթական ծրագրերի տեղեկագրքեր, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ:

### Խնդիր 3.

Կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառությունը ինստիտուտի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

3. 1. Բոլոր կրթական աստիճաններում անցում մոդուլացված, կրեդիտային հենքով ուսումնական ծրագրերի:
3. 2. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ընտրովի դասընթացների հաշվեկշռի մեծացում:
3. 4. Ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատածավալների վերակառուցման ընթացքում սահմանել օպտիմալ հարաբերակցություն՝ ձգտելով ուսանողի ինքնուրույն աշխատանքի դերակատարության էական բարձրացմանը :
3. 5. Սահմանել ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման կարգ և համապատասխան ընթացակարգեր, սահմանել համապատասխան մեխանիզմներ՝ ուսանողների ուսումնառությունն անհատական ծրագրերով կազմակերպելու համար:
3. 6. Կատարել նորմատիվային իրավական փոփոխություններ մասնակի բեռնվածությամբ ուսումնառության կազմակերպման և ըստ կրեդիտային բեռնվածության՝ ուսման վարձերի վճարման համար:
3. 7. Ստեղծել և կիրարկել դասընթացներին ուսանողների գրանցման, ուսման առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրման ու մշակման,



## Խնդիր 5.

Բարձրացնել ինստիտուտի վարկանիշը և ապահովել կրթական ծրագրերի մրցունակությունը:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

5.1. Ներդնել բակալավրական և մագիստրոսական կրթական նոր ծրագրեր թատերական և կինոարվեստի, հեռուստատեսության և մեդիատեխնոլոգիաների բնագավառում՝ դրանց համապատասխան մասնագետների պատրաստման համար:

5.2. Վերանայել ԵԹԿՊԻ-ի մասնագիտությունների և մասնագիտացումների չափորոշիչները ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան և համապատասխան առաջարկ ներկայացնել ՀՀ ԿԳ Նախարարությանը:

5.3 Ինստիտուտի կրթական ծրագրերում կրճատել պարտադիր լսարանային ժամերը, ավելացնել կամընտրական բոկի առարկաների քանակը, կրթական ծրագրերում կամ ընտրական առարկաների բաղադրիչը հասցնել 40 տոկոսի:

5.4. Արդիականացնել և կատարելագործել կրթության բովանդակությունը՝ կիրառելով գիտաստեղծագործական արդյունքները ուսումնական գործընթացում:

5.5. Լիարժեք ապահովել կրթական գործընթացը տեղեկատվական նյութերով, ուսումնական գրականությամբ, համացանցի միջոցներով:

5.6. Ավանդական ձևով կազմակերպված խմբերից աստիճանաբար անցում կատարել դեպի ad hoc՝ ուսանողի ընտրությամբ ստեղծվող խմբերը:

5.7. Ստեղծել տարբերակված առարկայական դասընթացներ բակալավրիատի մասնագիտությունների համար և ծրագրեր լրացուցիչ բակալավրական կրթության համար:

5.8. Համագործակցել ՀՀ և արտերկրի այլ բուհերի հետ՝ կրթական ծրագրերի համապատասխանեցման նպատակով:

## II. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

### Խնդիր 1.

Ընդլայնել ԵԹԿՊԻ-ի ուսանողական համակարգը՝ ի հաշիվ որակյալ դիմորդների ընտրության:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

1.1 Հասարակության մեջ ամրապնդել ինստիտուտի՝ որպես բարձրագույն ուսումնական հաստատության հեղինակությունը՝ ներկայացնելով բարձրակարգ կրթական ծրագրեր և ուսուցման որակ:

1.2. Ընդլայնել ինստիտուտի մասնագիտությունների ցանկը համաշխարհային փորձի, արվեստի նոր դրսևորումների, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

1.3. Շարունակել աշխատանքը հանրապետության ավագ դպրոցների, արվեստի և մշակույթի քոլեջների հետ: Այդ դպրոցներում ստեղծել բազային դասարաններ: Կազմել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, որոնք կապահովեն ԵԹԿՊԻ-ավագ դպրոց, ԵԹԿՊԻ-մշակույթի քոլեջ սերտ համագործակցությունը, ինչպես նաև ԵԹԿՊԻ կառուցվածքում հիմնել պրոֆիլային հենակետային դպրոց և քոլեջ:

1.4. ԶԼՄ-ների միջոցով տարածել տեղեկատվություն ԵԹԿՊԻ-ի վերաբերյալ:

1.5. Համագործակցել հանրապետության մարզերում տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ինստիտուտի ներկայացման և դիմորդների հավաքագրման աշխատանքներ կազմակերպելու համար:

1.6. Ընդլայնել և ակտիվացնել ինստիտուտի գովազդարշավը՝ այդ գործընթացում առավելագույնս ներգրավելով ողջ ինստիտուտի ներուժը, հիմնական գործատուներին և շահագրգիռ կազմակերպություններին:

1.7. Ակտիվացնել դիմորդների հետ նախապատրաստական դասընթացների գործունեությունը, հանրակրթական դպրոցներում կազմակերպել ուսումնական մասնագիտական պրակտիկաներ՝ ուսանող ռեժիսորների, դերասանների, օպերատորների ուժերով ստեղծել դպրոցներում խմբակներ ու ակումբներ, իրականացնել բեմադրություններ և այլ միջոցառումներ: Նախապատրաստել և

տրամադրել ԵԹԿՊԻ-ի ուսանողական կյանքն ու առօրյան ներկայացնող տեսահոլովակներ:

1.8. Ընդլայնել ավագ դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ կազմակերպելով ամենամյա ճանաչողական այցեր ԵԹԿՊԻ, դիմորդների համար կազմակերպել բաց դռների օրեր, ներկայացնել բուհի կրթական առանձնահատկություններն ու հնարավորությունները:

1.9. Ավանդական դարձնել հանրապետական դպրոցական թատրոնների փառատոները, մշակութային և արվեստին նվիրված օլիմպիադաները, մրցույթները, կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, բանավեճեր:

1.10. Օգտագործել ԶԼՄ-ներն ու համացանցի հնարավորությունները, ստեղծել ԵԹԿՊԻ-ի էլեկտրոնային թերթ և Վեբ հեռուստատեսություն:

### III . ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

#### Խնդիր 1.

Ուսանողների հետ տարվող կազմակերպչական և ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

1.1. Ուսանողության հայրենասիրական, մշակութային, բարոյագիտական դաստիարակության որակը բարձրացնելու համար ապահովել բոլոր ամբիոնների գործունեության համադասումը և մեծացնել դրանց ջանքերի արդյունավետությունը քաղաքացիական և հայրենասիրական համոզմունքների, բարձր բարոյական գաղափարների և ուսանողական երիտասարդության սկզբունքների դաստիարակության գործում, ապահովել ուսումնական և արտաուսումնական աշխատանքների կապը:

1.2. Ուժեղացնել ուսանողների կյանքի ու գործունեության բարենպաստ պայմաններն ապահովող աշխատանքները:

1.3. Աջակցել կամավորական գործունեությանը և դրա տարբեր դրսևորումներին, ստեղծել Շրջանավարտների Միություն, Կարիերայի կենտրոն, ուսանողների սոցիալական ու իրավական աջակցման կենտրոն:

1.4. Ուսանողների շրջանում պարբերաբար կազմակերպել ու անցկացնել միջառարկայական օլիմպիադաներ, ընդլայնել նրանց մասնակցությունը միջբուհական և միջազգային մրցույթներին, ցուցահանդեսներին, փառատոներին:

1.5 Աջակցել կրթական, մշակութային, բուհի գործունեության հետ կապակցված այլ՝ լրացուցիչ վճարովի ծառայություններ տրամադրող ուսանողական կառույցների ստեղծմանը:

#### IV. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

##### Խնդիր 1.

Համագործակցություն եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական և գիտական ոլորտներում:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

1.1. Մշակել ԵԹԿՊԻ-ի միջազգայնացման հայեցակարգ, միջազգային համագործակցության գերակա ուղղությունների կազմ:

1.2. Ընդլայնել ինստիտուտի միջազգային գործունեության դաշտը, նպաստել բոլոր ֆակուլտետների ներգրավմանը միջազգային համագործակցության ծրագրերում:

1.3. Նպաստել ինստիտուտի լիարժեք ներգրավմանը Բոլոնիայի գործընթացի բարեփոխումներում, մշակել և իրականացնել համապատասխան գործողությունների երկարաժամկետ ծրագիր:

1.4. Զարգացնել համագործակցությունը արտասահմանյան, այդ թվում նաև ԱՊՀ երկրների արվեստի բուհերի հետ՝ միջմասնագիտական ասպարեզներում համատեղ

մագիստրոսական ծրագրերի ստեղծման և որակավորման աստիճանների համատեղ շնորհման ուղղությամբ:

1.5. Խթանել ինստիտուտի ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին:

1.6. Իրականացնել հրավիրյալ օտարերկրյա դասախոսների ԵԹԿՊԻ պարբերական այցելություններ՝ մասնագիտական կրթական ծրագրերում նրանց մասնակցության ընդլայնման համար:

1.7. Արտասահմանյան արվեստի բուհերի հետ ներգրավվել միություններում և ցանցերում, կնքել երկարաժամկետ համագործակցության պայմանագրեր:

1.8. Նպաստել ինստիտուտի ՊԴԱ-ի և ուսանողության ներգրավմանը միջազգային նախագծերում ու դրամաշնորհային ծրագրերում:

## Խնդիր 2.

Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմի հավաքագրումը և ուսուցման կազմակերպումը:

### *Իրագործման համար անհրաժեշտ է.*

2.1. Նախապատրաստել դասախոսական ներուժ՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի պահանջարկված մասնագիտությունների գծով՝ անգլալեզու և կամ ռուսալեզու ուսուցում կազմակերպելու համար:

2.2. Օտարալեզու կրթական ծրագրերում դասավանդող դասախոսական կազմի համար սահմանել աշխատանքի վարձատրման տարբերակված նորմատիվներ:

2.3. Ուսումնասիրել օտարալեզու ընդունելության հնարավոր դոնոր երկրների ցանկը, ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ տարածաշրջանի երկրներում՝ համագործակցելով այդ երկրներում ՀՀ ներկայացուցչությունների հետ:

2.4. Ստեղծել պահանջարկված կրթական ծրագրերի՝ անգլերեն և ռուսերեն ծրագրային փաթեթներ, էլեկտրոնային տարբերակները տեղադրել ԵԹԿՊԻ-ի կայք էջում: Պոտենցիալ դիմորդների շրջանում տարածելու նպատակով հրատարակել

ուսանողի ուսումնառության ուղեցույց, դասընթացների տեղեկագիրք, ինչպես նաև ԵԹԿՊԻ-ի մասին համառոտ տեղեկատու:

2.5. Հայաշատ երկրներում իրականացնել աշխատանքներ սփյուռքահայ դիմորդների ներհոսքը ակտիվացնելու համար. այդ նպատակով համագործակցել համայնքների հետ, պատրաստել ճանաչողական տեսաֆիլմեր:

2.6. Համագործակցել ՀՀ Սփյուռքի նախարարության հետ, „Արի տուն,, ծրագրի շրջանակներում Հայաստան ժամանած ուսանողների համար ԵԹԿՊԻ-ում կազմակերպել այցելություններ, ներկայացումների, ֆիլմերի դիտումներ, հանդիպումներ անվանի դերասանների, արվեստի գործիչների հետ:

## V.ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

### Խնդիր 1.

ԵԹԿՊԻ-ի ֆինանսական միջոցների ներհոսքի մեծացում և դրանց աղբյուրների բազմազանեցում:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

- 1.1 .Զարգացնել ԵԹԿՊԻ -ում ներդրված ֆինանսական պլանավորման համակարգը, ապահովել ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու նպատակային բաշխումը, բարձրացնել ռեսուրսների կառավարման արդյունավետությունը:
- 1.2 .Ընդլայնել և շարունակաբար զարգացնել ԵԹԿՊԻ-ի մատուցած ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման և առևտրայնացման քաղաքականությունը՝ կրթական, գիտահետազոտական և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում:
- 1.3 .Նպատակաուղղել ԵԹԿՊԻ -ի հետագա ծախսային քաղաքականությունը բուհի առջև ծառայած և կենսական կարևորություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը, իսկ տարեկան հասույթը ուղղել ինստիտուտի զարգացմանը և աշխատակիցների սոցիալական խնդիրների լուծմանը

- 1.4 .Դիմել ՀՀ կառավարությանը վերանայելու և փոփոխելու ԵԹԿՊԻ-ին թույլատրված ձեռնարկատիրական գործունեության տեսակները՝ շուկայի պահանջներին համապատասխան:
- 1.5 .ԵԹԿՊԻ -ի կոմերցիոն գործունեության իրականացում և արդյունավետության բարձրացում՝ ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության և ֆինանսական նոր մենեջմենթի կիրառման հիման վրա:
- 1.6 .Մշակել և ներդնել ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգ, շարունակել աշխատանքները ԵԹԿՊԻ -ի վարչական և սպասարկող կազմի գործունեության քանակական և որակական ցուցանիշների հետագա բարելավման ուղղությամբ:
- 1.7. Ընդլայնել ԵԹԿՊԻ -ի վճարովի ծառայությունների տեսակները և ծավալները, բարձրացնել այդ ծառայությունների եկամտաբերությունը:
- 1.8. Իրականացնել ծրագրեր՝ ԵԹԿՊԻ շրջանավարտներին, բարերարներին և այլ աջակցողների հայտնաբերման, նրանց՝ ինստիտուտին նվիրատվությունների, շնորհների և ներդրումների դաշտ բերելու համար, համատեղ ծրագրերը լուսաբանել և ներկայացնել հանրությանը: Նրանց հետ զարգացնել և պահպանել երկարաժամկետ գործակցային հարաբերություններ:

## VI. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ

### Խնդիր 1.

Դասախոսական որակյալ կազմի ստեղծում, համալրում և բարելավում:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

1.1.Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիր:

1.2.Իրականացնել դասախոսական կազմի բազմաչափ գնահատում՝ ըստ մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության, անձնային որակների և տարիքային կազմի:

1.3.Ստեղծել պայմաններ դասախոսների ինքնակրթության և գիտական ու մանկավարժական շարժունության համար:

1.4.Կազմակերպել դասախոսների վերապատրաստում կրթական բարեփոխումների պահանջների լույսի ներքո:

1.5.Ստեղծել դասախոսների համար համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:

## VII. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Խնդիր 1.

Հետազոտությունների ծավալի էական աճ՝ դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

1.1.Ապահովել ԵԹԿՊԻ-ի գիտական, ստեղծագործական և հետազոտական աշխատանքների և կրթական գործընթացի ինտեգրումը և դրա միջոցով բուհի առաջընթացը:

1.2.Ամրապնդել ԵԹԿՊԻ-ի դիրքը՝ որպես թատերական արվեստի, կինոարվեստի և հեռուստատեսության ոլորտում կադրերի պատրաստման ազգային և համազգային կենտրոն:

1.3.Շարունակել ավանդական դարձած գիտական, հետազոտական, ստեղծագործական միջոցառումների անցկացումը՝ հնարավորինս ապահովելով միջազգայնորեն ճանաչված արվեստագետների, գիտնականների մասնակցությունը:

1.4.ԵԹԿՊԻ-ում ձևավորել գիտական և ստեղծագործական կենտրոններ՝ ուսումնական ծրագրերում նորարարական գիտելիքների ու փորձի արդյունավետ օգտագործման ու տարածման նպատակով:

1.5.Բարձրացնել ամբիոնների գիտական, ստեղծագործական գործունեության որակը: Զարգացնել միջամբիոնական և միջբուհական համագործակցությունը:



1.6. Երիտասարդ դասախոսների և մագիստրոսների համար պարբերաբար կազմակերպել սեմինարներ, ամառային դպրոցներ՝ արտասահմանյան գործընկերուհերի հետ համատեղ:

1.7. Բարձրացնել ուսանողների գիտահետազոտական գործունեության արդյունավետության որակը, աշխուժացնել ինստիտուտի, ֆակուլտետների և ամբիոնների ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքները, ապահովել ուսանողների մասնակցությունն այլ բուհերի գիտական համաժողովներին, սեմինարներին, ուսանողական փառատոներին:

1.8. Մշակել և իրականացնել երիտասարդ գիտնականների և դասախոսների աջակցման ծրագրեր:

1.9. Ընդլայնել ինստիտուտի գիտական համագործակցությունը գործընկեր բուհերի հետ: Մշակել համատեղ գիտահետազոտական նախագծեր:

1.10. Աստիճանաբար բարձրացնել ԵԹԿՊԻ-ի գիտական, ստեղծագործական արտադրանքի միջազգային վարկանիշը, խրախուսել հրապարակումներն ու ներկայացումը միջազգային մակարդակներում:

1.11. Կիրառել ԵԹԿՊԻ-ի մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցներ:

## VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Խնդիր 1.

Կազմակերպչական և կառավարման որակի ներդրում բուհական համակարգում:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

1.1. Կառուցվածքային ստորաբաժանումների ձեռքբերումների պարբերական մոնիթորինգի և գործունեության բոլոր ուղղությունների անընդհատ զարգացումը ապահովող նպատակների մշակման հիման վրա՝

- կորպորատիվ տեղեկատվական համակարգի ներդրումը,

- նախաձեռնողական գործունեություն,
  - բարձրագույն դպրոցի նորմատիվ իրավական բազայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում:
- 1.2. Բուհի տարածքային բաշխման խնդիրներին համապատասխանող կառավարման համակարգի ու տեխնոլոգիաների զարգացում:
- 1.3. ԵԹԿՊԻ-ի ղեկավարման ժամանակակից կառուցվածքի ձևավորում:
- 1.4. ԵԹԿՊԻ-ի կառավարման համակարգի ապակենտրոնացում և նրա աշխատանքի թափանցիկության աստիճանի բարձրացում:
- 1.5. Կառավարման կադրային ռեզերվի նախապատրաստում:
- 1.6. Կազմակերպել ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների միջև առողջ մրցակցություն, այդ նպատակով յուրաքանչյուր աշխատակցի մասնագիտական գործունեության որակական և քանակական ցուցանիշների համակարգի մշակում:

## IX. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

### Խնդիր 1.

Ուսուցման և աշխատանքի պայմանների բարելավում:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

- 1.1. Ներդնել սպասարկման որակի միջազգային չափանիշներ և ծառայությունների բազմազանություն դասախոսների և ուսանողների համար՝ անունդն ու բուժապասարկումը:
- 1.2. Ուսանողների և դասախոսների սոցիալական աջակցման զարգացում՝ այդ նպատակով.
- ստեղծել ուսանողների աշխատանքի, ուսման և արտուսումնական գործունեության անվտանգ ու հարմարավետ պայմաններ,
  - տեղեկատվական պաշարների հասանելիություն,

1.3. ԵԹԿՊԻ-ի ամբիոնները ապահովել ուսանողների հետ տարվող գիտական ու անհատական աշխատանքների համար անհրաժեշտ տարածքներով ու սարքավորումներով:

1.4. Իրականացնել լսարանների տեխնիկական արդիականացում, ուսումնական շենքի ժամանակակից տեխնիկական միջոցների առկայությունը կանոնակարգող չափանիշների մշակում և ներդնում:

1.5. Ստեղծել պայմաններ ուսանողների և աշխատակիցների ազատ ժամանակը հետաքրքիր և արդյունավետ անցկացնելու համար:

## Խնդիր 2.

Բարձրացնել ԵԹԿՊԻ-ի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

2.1. Պարբերաբար գնահատել աշխատողների սոցիալական բավարարվածության մակարդակը:

2.2. Անցնել դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման՝ ըստ գործունեության արդյունքների, աշխատանքի արդյունավետության և մասնագիտական կատարելագործման խթանման:

2.3. Մշակել և ներդնել դասախոսների ուսումնամեթոդական և գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների նոր համակարգ և գնահատման ընթացակարգ՝ պրոֆեսորադասախոսական տարակարգերի առաջընթացի և աշխատավարձի անհատականացված բարձրացման հիմք ընդունելով գործունեության գնահատման արդյունքները:

2.4. Մրցութային բարելավված մեխանիզմների հիման վրա իրականացնել դասախոսական կազմի համալրման և աճի հեռանկարային ծրագիր՝ ապահովելով անձնակազմի միջին տարիքի նվազեցման կայուն միտումներ:

2.5. Ներդնել դասախոսների մշտական գործող կատարելագործման և վերապատրաստման համակարգը:

2.6. Իրականացնել ամենամյա գնահատման գործընթացը՝ դասավանդման որակի շարունակական բարելավման նպատակով՝ գնահատման ցուցանիշներում՝ որպես բաղկացուցիչ կառուցամասեր, ուսանողական հարցումների արդյունքների հետ մեկտեղ ներառելով նաև դասախոսի ինքնագնահատումը:

### **Խնդիր 3.**

**Ինստիտուտում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:**

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

1.1. Կատարելագործել դասախոսների, վարչական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության և առաջխաղացման մեխանիզմները՝ ապահովելով այդ գործընթացների անաչառությունն ու թափանցիկությունը:

1.2. Կատարել համապատասխան փոփոխություններ ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման ընտրությունների կանոնակարգում՝ մրցույթների անցկացման ժամանակ կարևորելով դասախոսների անձնային և բարոյահոգեբանական հատկանիշները, հատկապես հաշվի առնելով ուսանողների և շրջանավարտների հարցման արդյունքները:

1.3. Բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև ուսումնական գործընթացի վերահսկելիությունը:

1.4. Խստացնել ադմինիստրատիվ-վարչական հակակոռուպցիոն միջոցառումները և կատարելագործել կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մեխանիզմները՝ մեծացնելով վերահսկողությունը ինստիտուտի բոլոր ստորաբաժանումների (ֆակուլտետներ, ամբիոններ, բաժիններ և այլն) վրա, ապահովել դրանց գործունեության բոլոր ոլորտների թափանցիկությունը:

1.5. Ստեղծել հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողով, որը կիրականացնի հակակոռուպցիոն իրազեկման ծրագրեր՝ ինստիտուտի դասախոսների և ուսանողների շրջանում կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի դաստիարակման և նրանց համապատասխան գիտելիքներով զինման նպատակով:

## Ճ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ

### *PR ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ*

#### Խնդիր 1.

Հասարակության հետ կապերի հետագա զարգացում, ԵԹԿՊԻ-ի գործունեության արտաքին օժանդակություն և ճանաչում:

*Իրագործման համար անհրաժեշտ է.*

1.1. Ինստիտուտի՝ որպես 21-րդ դարի նորարարական դինամիկ զարգացող բուհի հեղինակության ձևավորում, ինստիտուտի արտաքին աջակցման միջավայրի ստեղծում:

1.2. ՋԼՄ-ներում ինստիտուտի կրթական, գիտական ,միջազգային ու հասարակական գործունեության պարբերական, հրատապ և ճիշտ լուսաբանում:

1.3. Ինստիտուտի ինտերնետային կայքի արդիականացում՝ ապահովելով նրա լրատվական, տեխնիկական վիճակը և շահագործման արդյունավետությունը:

1.4. Բազմազանեցնել տեղեկատվության տարածման ձևերը, ինտենսիվ կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները, ներինստիտուտային սպառումից անցնել արտաքին սպառման:

1.5. Պարբերաբար իրականացնել ինստիտուտի հեղինակության մոնիթորինգ՝ PR գործունեությունն առավել օպերատիվ և նպատակային դարձնելու նպատակով:

1.6. Համակարգել և նպատակաուղղել գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները, անցկացնել PR ակցիաներ դպրոցներում, վարժարաններում՝ դիմորդների, ծնողների, կրթական կազմակերպությունների ներգրավմամբ:

1.7. Մշակել և իրագործել ինստիտուտի՝ հասարակության հետ կապերի զարգացման միասնական ծրագիր՝ հիմնված բուհի կրթական, գիտական, միջազգային ասպարեզում իրականացվող քաղաքականության վրա:

1.8. Ինստիտուտի առաջնային խնդիրը համարել մասնակցությունը հանրային նշանակություն ունեցող ազգային և միջազգային ծրագրերին:

1.9. Ստեղծել երկարաժամկետ համագործակցային կապեր ինստիտուտի հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ: